Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Рибшурину

Урік

891.99
Р-17

1903

529

ՎՐԷԺ

ԱՇԽԱՏԱՍԻՐԵՑ ԵՒ ՀՐԱՏԱՐԱԿԵՑ

ՎԱՐԴԱՆ ՔԱՄԱԼԵԱՆՑ

ԽԱՐԲԵՐԴՑԻ

ԱՌԱՋԻՆ ՀԱՏՈՐ

ՎԱՌՆԱ

1903

-6 NOV 2011

ՆՈՒԷՐ

ԻՄ ՅԱՐԳԵԼԻ ԲԱՐԵԿԱՄ

Պ. ԳԱԼՈՒՍՏ ՆՈՐՀԱՏԵԱՆԻ

Ի ՆՇԱՆ ԱՆԿԵՂԾ ՍԻՐՈՅ

ՄՏՔԻՍ ԱՌԱՋԻՆ ՊՏՈՒՂՔ

ՀԵՂԻՆԱԿԸ

29.08.2013

ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀՍՍՀ Арм.ССР
им. А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ

10012 - Н

ՀԱՅԻ ՏՂԱՅ

Մի լինիր երկչոտ
Միշտ եղիր քաջ սիրտ
Որ ըլլաս տէրը
Ապահով կեանքիդ։

Թէ կուզես արդար
Օրէնք իրաւունք
Սուրը քո ձեռքիդ
Միշտ բռնիր ամուր։

Սիրիր դու սրտով
Եղբօրդ սիրով,
Ապա կը յաղթես
Թշնամիդ ատով։

Զըլլայ որ խաբուիս
Քո ոսոխ կրքէդ
Քեզի կը հանէ
Կենսական փառքէդ։

Վերջին զղջումեդ
Չես քաղեր օգուտ
Կը տանի քեզի
Յաւիտեան կորուստ:

Թէ չըլլաս պաշտպան
Հայրենի հողիդ
Քու յաջորդ սերունդ
Վայ կուտայ գլխիդ:

Ջանա՛ որ լինիս
Նման քոյ նախնեաց
Ջնջես թշնամին
Քոյ սուրբ հայրենեաց:

Եւ շիրմիդ վրայ
Որպէս դրօշակ
Ծածանուի անունդ
Յաւէրժ յիշատակ:

ՈՐԴԻՔ ՀԱՅՐԵՆԵԱՑ

Մեր մայրերը սնուցեր են
Իրանց կաթով մեր կեանքը,
Որ մենք լինենք վեհ հայրենեաց
Ազատութեան պարծանքը:

Ելնենք փշրենք սուլտանական
Մեր շղթայած կապանքը,
Բաւէ նոցա մեզի տուած
Անտանելի տանջանքը:

Գնանք եղբարք, ջնջենք խաւար
Այն վատ ազգի սերունդը
Գլորենք մենք օսմանների
Գահը դէպի անդունդը:

Խրամներին գնդակահար
Տապալենք մենք գետինը.
Թող սարսափի աթոռ նստող
«Եըլտըզ քէօշկի» Համիտը:

Մեր ղէնքերի փամփուշտները
Թող որոտան անդադար
Գլորելով Մէհմէտներին,
Ղրկենք դէպի այն աշխարհ:

Խալիֆական ֆէրմանովը
Ջնջել կուզեն հայ տարրը,
Գաղտնների նպատակը
Թողնենք իրանց սրտերը:

Գերութիւնը մի՞թէ մեզի
Անվերջ մնայ անընդհատ
Մենք ենք, մենք ենք այն երկրի
Բնիկ տէրը հարազատ:

Դէհ շուտ տղերք, ըշտապեցէք
Գնանք դէպի մարտի դաշտ.
Այն տեղ կռուենք այն տեղ պարզեն
Մեր Հայ ազգի դրօշակ:

ՀԱՅԻ ԻՐԱՒՈՒՆՔԸ

Եւրոպական մեծ պետութիւնք
Գումարուեցան Պերլինում.
Վեհաժողով նիստ կազմեցին,
Եօթանասուն ութ թվում

Անկեալ ազգաց խնդիրները
Այն տեղ քննել ըսկսան,
Համախորհուրդ յանձն առին
Պաշտպան լինել անտէրին:

Ահա դարի քառորդն անցաւ
Ոչ ինչ չարան իրական,.
Դեռ նոյն ցաւով տանջուումենք
Զը բուժեց մեզ Եւրոպան:

Երեք հարիւր վաթսուն հազար
Հայ անմեղներ զոհուեցան,
Հրաժարուեց անգութ Եւրոպ
Այս մեծ հարցի ձեռնարկման:

Մեր Հայկական հարցը մի ցոյց
Լոկ մատեանում գրեցին.
Իւրեանց խոստումնք գլանալով
Մեզ անպաշտպան թողուցին:

Ողբ հառաչանք յորդ արտասուք
Հային բաժին հանեցին,
Արդ ցաւերնիս կրկնապատկեալ
Արեան ծովը ձգեցին:

Խնդակցական ժպիտները
Եըլտըզ քէօշկին ղրկեցին,
Առ ի պատիւ խալաֆների
Հայուն վիշտը ծաղրեցին:

Մեր վէրքերըն բացին խորին
Անըսպեղան թողուցին,
Անբուժելի անթիւ ցաւոց
Ենթարկելով լռեցին....

ՀԱՄԲՈՅՐ ՀՐԱԺԵՇՏԻ

Եկ տուր մայրիկ քո համբոյրը
Պիտի գնամ Հայաստան,
Տամ իմ կեանքս վե՛հ հայրենեաց
Վերանորոգ փրկութեան:

Արդէն մայրիկ երբ ալ լինի
Մի օր պիտի ես մեռնիմ
Ինչու՞ ազգիս ազատութեան
Այն սուրբ գործին չ՚զոհուիմ:

Մի՛ լար մայրիկ իմ անուշիկ
Անհրաժեշտ պիտ երթամ
Թէ՛ որ մեռնիմ ես չը դառնամ
Ցաւ քո սրտին թող չըլլամ:

Որովհետեւ իմ ինկած տեղ
Անթիւ ծաղկունք պիտ բուսնին
Նոր կեանք, նոր փառք պիտ աւետեն
Մայր հայրենի աշխարհին:

Իմ հարազատ ազգ հայրենիք
Ինչպէս մայրիկ ուրանամ
Զիք վասակայ, Մերուժանայ
Նմանների կարգ մոնամ։

Թէ քո լային ուշ դնեմ ես
Իմ քաղցրիկ մայրիկը
Զիս սընուցող հայրենեացս
Առչև կըլլամ սև երես։

Երբէք մայր իմ դու չ'կարծես
Զրի կուտամ իմ արեւ
Անթիւ թրքեր պիտ տապալեմ
Ապա հոգիս աւանդեմ։

Լեր դու ուրախ իմ կաթոգին,
Ազգիդ ծաղկեալ դարունով
Արշալոյսի այն նոր ծագմանն,
Ողջունես իմ գերեզմանն։

Ամեն ծաղկունք իր թփերից
Պիտի հնչեն Հայաստան,
Որպէս սոխակք կը դայլայլեն
Գարնանային դալստեան։

Մի թէ ես չեմ Հայաստանի
Առիւծասիրտ հայ տղայն

Որ չ'գընամ հուր, կայծակներ
Թափեմ թուրքի գլխիկան։

Շուտ բեր մայրիկ իմ զէնքերը
Ժամանակ չէ կենալու.
Ահա հնչեց փողն մարտի
Պէտք է երթամ կռուելու։

Խալիֆների իրատէներ
Քակեց, քանդեց մեր տներ
Անմեղ արեանց հոսող գետեր
Զը դադարան վեց դարեր։

Հայ արիւնով ոռոգուեցան
Ամեն խոռոչք ու խորքեր,
Վախ մեր ազգի սրտին վրայ
Բացեց մեծ մեծ խոր վէրքեր։

Մ'ես դու մայրիկ հերիք է լաս
Պահէ այդ քո արցունքներ
Երբոր դառնամ յաղթանակաւ
Լուաս իմին այն վէրքեր։

Այլ ես կերթամ պատերազմի
Լացի փոխան դու խնդայ
Թող ես մեռնիմ միայն ազգս
Ազատութիւն ըստանայ։

ԲԱՒ Է ՆԻՐՀԵՆՔ

Ահա մեր մայրը ցաւի երկունքում
Ցասը մեր վրայ դրած սպասում
Հոգեվարքի մէջ ընկած տառապում
Դեռ մենք քարացած խորդ, խորդ ենք նայ

Ծառայենք եղբարք տանք նրան դեղ ճա
Որ կանգնի ոտքի Հարազատ մեր մայր
Մինչ երբ մենք այսպէս մնամք անտարբեր
Առանց մենք նորան կորուստ ենք Հայեր

Քանի՞ մէկ քանի, լսենք եղբայրներ,
Վեց դար չարունակ որպէս ստրուկներ
Մենք առանց հովուի ցրուեալ ոչխարներ
Հերիք գայլերի ըլլանք բաժիններ:

Բաւէ մեր գերեաց լինենք գերիներ
Նոցա ոտքի տակ դնենք գլուխներ
Ովք են մեզ նոքա լինին իշխողներ,
Ծըծեն մեր արեան վերջին կաթիլներ:

նենք տանք նորանց հուժկու հարուածներ
արափ դաշտն է մեր կեանքի լաւ ժամեր.
ի՞ թէ քաջ Հայկայ մենք չենք սերունդներ
ր չառնենք մեր վրէժ նորանցմէ Հայեր:

Հերիք է ճգնենք բանտի յատակներ
Մաշենք մեր հոգիք կապանք շղթայներ
Բաւ է մեր կանայք, դստերք, երախայք
Զոհէ թշնամին անգութ, անիրաւ:

էհ ելնենք եղբարք, իջնենք մարտի դաշտ.
ուծենք մեր վրէժ զէնքերով անհաշտ.
թէ որ մենք այսպէս միշտ մնանք թմրած
ըլլար փրկութիւն իսպառ ենք կորած:

Կռուելով քաջ քաջ ջախջախենք նորանց,
Զը թողնենք այն տեղ հետքըն թշնամեաց
Փոխան խալիֆայ մեծն Տիգրաններ
Բազմին Հայաստան Հայոց արքայներ:

Բաւ է հայրենեաց անվերջ դաւաճան
Թող թշնամիք մեր վրայ խնդան
Ըլլանք մեր յեանց անմահ պարծանքներ
Որպէս մեր քաջեր Վարդան, Վահաններ:

Մեզնից վերցնենք մեզ քանդող խեր
Հերիք մէկ մէկի ցանենք որոմներ,
Մեր մայրը մէկ է մենք ենք եղբայրներ
Մենք պիտի փրկենք մեր աշխարհն ամեր:

ՄԵԾ ԻՇԽԱՆ ԿԻԼԻԿԻՈՅ

Զէյթունի առիւծ Պապիկ մեծ իշխան
Պարզէ դրօշակ սուրբ ազատութեան,
Կոտրէ թուրքը ցեղ խղամական,
Վերջ դիր այդ զազրած անգութ բռնութեանց:

Նժոյգի նստած մերկ սուրը ձեռիդ,
Հրաման տայիր անթիւ զօրքերիդ
Օն զօրքդ քաջ քաջ ընդդէմ ելնէիր,
Ցաճկաց բանակին խիստ հարուած տայիր:

Ընէիր զօրացդ սաստիկ հրաման,
Քաշէիր բանակդ գնայիր դէպ Վան.
Լուայիր արեամբ մեծ Վասպուրական,
Առնէիր բերդն մեր հնադարեան:

Հայկազն իշխան Պապիկ զօրապետ,
Փախչի թշնամին ահեղ քո սըրէդ,
Զէյթունի քաջեր առնելով քեզ հետ,
Անցնիս ի Սասուն, դէպ ի Մանազկերտ:

Մեր քաջ Նախարար մեծն Թաթուլի
Վրէժն լուծես աւերակուտի,
Մեղայոյց արեամբ դաշտեր ոռոգուի
Զթողնես այն տեղ նորանցից ոչ մի:

Վայրենի ցեղն խիստ հրոյ ճարակ
Վառէիր նորանց որպէս մի պուրակ,
Քո յաղթանակին անվերջ յիշատակ,
Պարզէիր Կարին Հայոց դրօշակ:

Շատ հանէր դուժն Ապտիւլ Համիտին
Սարսափը տիրէր Եըլտըզի քէօշկին,
Խաւարը պատէր Ոսպորի ափին
Ողբ ու կոծ տեղար խալիֆի գլխին:

ՄՕՏ ԱՊԱԳԱՅՈՒՄ

Ահա մօտ է ժամանակը
Դրօշակներ Հայկական
Առիւծ, վիշապ, բազէ, արծիւ
Պիտ ծածանուին նախնական:

Կխալուանին անհրաժեշտ
Պիտի ձգենք ոտքի տակ,
Թող չը յուսայ այն հրէշը,
Թէ կը մնանք սրին տակ:

Гос. Библиотека Арм.ССР им. А. Мясникяна

Ժամանակը արդէն հաս է
Վերջն է նոցա օրերին,
Մեր սրերի բերանները
Պիտ վաղցնենք արիւնին:

Այսուհետև չպտի թողնենք
Որ մեր առջև շունչ առնեն,
Գնդակահար պիտի անենք
Այն չէք տարրը անօրէն:

Ո՛չ Բահալը թող չի կարծէ
Միշտ կը մընայ հոգէառ
Մեր մայրենի սուրբ աշխարհը
Պիտի փրկենք անպառճառ:

Հայ արիւնը բաւէ խմէ
Լըսվիրշ ցեղը անիրաւ
Հին դարերի վրէժները
Պիտի առնենք մենք հարկաւ:

Արդէն Հայքս զէնքի դիմած
Ոխ ենք լուծում անդադար
Մենք քաջ նախնեաց որդիներս
Ուխտադրուժ չենք ըլլար:

Միշտ մղելով ընդդէմ Թրքաց
Ահեղ կռիւ անընդհատ.
Բնաւ պիտի չառնենք դադար
Մինչև փրկենք մեր աշխարհ:

ՍՈՒՔԱԿԻ ԳԱՐՈՒՆԸ

Բնական է որ սոխակն
Խիստ սիրում է վարդենին
Նստել երգել թփին վերայ
Իւր քաղցրիկ Մեղեդին:

Նա ջերմ սիրով փափագում է
Գարնանայի գալուստին,
Որ տայ սիրոյ համբոյրներն
Կարմրատայտ վարդերին:

Թռչռում է քնքոյշ սիրտը
Հեզ սիրահար էակին.
Ցեռնել գարուն և գայլայլել
Իւր Հայրենի մէջ հողին:

Դեռ նա կողբայ մեղամաղձոտ
Սրտի խորքէն մեղեդին.
Թէ իւր ձեռքէն որպէս թռաւ
Այն գարունը թանկագին:

Եւ թևերը գլխին քաշած
Ողբերգում է ցաւագին,
Մի թէ այն վեհ գարնան նման
Պիտ չի տեսնէ նա կրկին:

Ախ անիրաւ անգութ տարերք
Ի՞նչ էք ուզում սոխակէն,
Թողէք նորան ազատ երգել,
Իր հայրենի վայրերէն:

Նա վաղուց է մեղեդիններ
Արձակ ձայնով չէ յորդեր
Փոթորկալի եղանակներ
Պատճառում են արգելքներ:

Նա մանաւանդ հիւսիսային
Սաստիկ հողմն փչում է
Կայծակի շանթ արձակելով
Մռնչում ու փնչում է:

Որչափ կուզէ թող այն փչէ
Մեր սոխակին հոգը չէ,
Այդպէս օրեր շատ տեսեր է
Ձմրան վերջը գարուն է:

Արդէն երբէք չէ երկնչեր
Մրրկածուփ ամպերէն
Նորա համար խոչընդոտներ
Խաղալիքներ եղեր են:

ՔՈՅՐԸ ԵՒ ԵՂԲԱՅՐԸ

ՄԱՍԻՍ

Ես Մասիսըս սև քօղուած եմ
Դու չես տեսներ Արարատ
Այդպէս անհոգ զուարթերես
Որպէս արքայ բազմեր ես:

ԱՐԱՐԱՏ

Մի նորոգեր իմ վշտերս
Քոյր իմ անուշ հոգեակըս
Ա՛խ ցաւերն խիստ, խիստ շատ են.
Կորուսեր եմ իմ Թագըս:

ՄԱՍԻՍ

Այն օրվանից տխուր ամպուած
Գլխիս քաշած սև քօղըս
Հառաչանքներ արձակելով
Կը փնտռեմ ես իմ Տէրըս:

ԱՐԱՐԱՏ

Հայկ ու Տրդատ, Տիգրան, Արամ
Կորուսի այն վեհազներս

Արդեօք նոքա ուր են նիրհում,
Գան վարատեն այս ցաւերս։

ՄԱՍԻՍ

Երբ կը տեսնեմ օտար որդիք
Որ մեր վրայ իշխում են,
Սրտաճմլիկ քօղիս տակէն
Աչքէս արցունք հոսում են։

ԱՐԱՐԱՏ

Այդ նեռերը արձակելով,
Հոգւոյս տունը մի քանդեր.
Արդէն վերքով ես անթիւ եմ
Մաշուած սիրտս մի վառեր։

ՄԱՍԻՍ

Կար ժամանակ մեր ճակատին
Առիւծ, վիշապ դրօշակ,
Ամեն մի ազգ խոնարհում էր
Մեր քաջերի սիգաց տակ

ԱՐԱՐԱՏ

Վերջ դիր քոյր իմ այդ թախծալի
Հոգեհանիչ խօսքերին,
Յիշեցուցիր այն օրերն
Մեծն Պարոյր արքային։

ՄԱՍԻՍ

Էՙր չը յիշեմ այն դարերն
Կամ երազ էր կամ իրաւ
Բազէ, արծիւ, ծածանւում էր
Գագաթներէս որ թռաւ։

ԱՐԱՐԱՏ

Շանթի նըման հարուած տուիր
Իմ վիրաւոր թոյլ կրծքին,
Մտաբերի յաղթող արքայն
«Մեծն Արտաշէս» պարթևին։

ՄԱՍԻՍ

Ո՞ւր են արդեօք իմ հարազատ
Թորգոմատան որդիքը,
Մի՞թէ այն օր պիտ չի լինի
Նոքա նստին իմ գիրկը։

ԱՐԱՐԱՏ

Ես իմ յոյսս չեմ կորած
Այն վեհ քաջաց սերնդէն
Անհրաժեշտ պիտի փրկեն
Մեզ այս սըգոյ օրերէն։

ՄԵԶՆԻՑ Է ԿԱԽՈՒԱԾ

Բաւ է հայեր գլուխ ծռենք
Ժամանակ է զինուելու,
Ճակատ պարզենք դէմ թշնամեաց
Մեր պատիւը փրկելու:

Քանի մէկ դար մնանք այսպէս
Անբաղդ, գերի, անիշխան,
Մեր բաղուկն է մեզի փրկող
Անվերջ սիրով անսահման:

Դէհ շուտ եղբարք, ելնենք զինուենք
Սարկուածեան վերջ տանք մենք
Մեր օրերով նոցա արիւն
Որպէս գեսեր հեղհեղենք:

Միշտ կորչում է հայութիւնը
Զոնի ոչ մի օգնական.
Իսպառ կուզեն նորան ջնջել
Թլեն ձեռքից Արմենիան:

Նոր վահաններ, նոր վարդաններ
Հանդէս թող գան ազգութեան
Անտէր Հայոց սուրբ դիակներ
Բաւ է լինին տեսարան:

Մեր յոյսերն երբէք եղբարք
Այլոց վրայ թող չըլլան
Մեր շողշողուն զէնքերովն
Մենք պիտ լինենք մեզ պաշտպան:

Խալիֆներն միշտ հաշուած են
Հայաստանը սեփական...
Բնական է յիմարները
Շատ սխալներ կունենան:

Մեր կոյս աղջիկ ու հարսունքներ
Մինչ երբ ծածկեն սև քօղեր
Խաւար բանտի կապանքները
Մեզի լինին բաժիններ:

Երբէք, երբէք յոյս չի գնենք
Նենգ սուլթանի խօսքերին
Կեղծ սրտովը բաւ է նա միշտ
Մեզի մատնէ սև հողին:

Ելնենք եղբարք շտապենք մենք
Գնանք, գնանք մարտելու
Համիտական անարգ լուծն
Մեզնից խպառ վերջ տալու:

ՍԳԱՒՈՐ ՄԱՅՐԻԿ

Այրիկ մինչ Ե՞րբ քեզ սև քօղով
Պիտի տեսնենք խճբճուած
Ալ չենք կարող մենք հանդուրժել
Տեսնել այդպէս անբուժուած:

Արդ որդիքդ թէ ենք առած
Սաւառնում ենք քո վրադ
Երբեք պիտի չառնենք դադար
Մինչև չերգես դու ազատ:

Մեթէ քեզի վիճակուած է
Միշտ տանջանք ու տառապանք
Ո՛չ ո՛չ այդպէս քեզ չենք թողներ.
Շուտ կատանաս դու նոր կեանք:

Մենք ուխտեր ենք թափել վերջին
Մեր արիւնը բոսորակ,
Ոչ սրերնիս պատեան չիջնիր
Մինչև չառնենք յաղթանակ:

Քո սուրբ կրծքին պիտ ծածանենք
Ազատութեան դրօշակ,
Այդպէս լքուած եւ կաշկանդուած
Պիտ չի թողնենք ոտքի տակ:

Քո անդրանիկ և հարազատ
Որդւոց փառքն ու պարծանք
Անհրաժեշտ պիտի տեսնես
Այն վեհ յաւէտ բերկրանք:

Ահա մօտ է թշնամիքդ
Որ պիտ տեսնես խոնարհուած
Նոցա կեանքը քեզի դրաւ
Պիտի ընենք անկասկած:

Այն փչալի անապատներդ
Պիտի ըլլան բուրաստան
Դարձեալ պարծանք վէս աշխարհին
Դու պիտ լինիս Հայաստան:

ԳՈՎԵՍՏ ՀԱՅԱՍՏԱՆԻ

Դրախտավայր մայր Հայաստան
Զորս գետ ունիս աննման.
Հովիտներդ ծաղիկներով
Գեղատեսպար բնական:
Խիստ կը փայլես աստղի նման
Հրաշազարդ տեսարան
Գերազանց ես ամեն դիրքով
Ո՛վ հոգեակ իմ պատուական:
Անտառներդ մեղր և կաթ
Ծոր, ծորում են մշտական
Վճիտավազ աղբիւրներդ
Կեանք բաշխում են մարդկութեան:
Սաքսոնեան, Զըվիցերեան
Ու Նորվէկեան քեզ կուգան
Բնաւ չիկայ քեզի նման
Զնաշխարհիկ Հայկական:

ԸՆԴԴԷՄ ԵՒՐՈՊԻՈՅ

Եւրոպ մինչ երբ հայուն խաբես
Մատով ցոյց տաս մատեանը;
Դու խիղճ չունիս գըթալ անմեղ
Մանուկների արեանը:

Դեռ չը տեսանք մենք քեզանից
Նշոյլ չափ բարիք մը.
Համբերելով մեր կեանք չիջաւ
Չի գործեցիր հրաշք մը:

Եւրոպ ինչու՞ շուտ մոռացար
Այն քո հպարտ խօսքերին,
Որ երբ հայը ներկայացաւ
Վեհաժողով ատեանին,

Դու ասացիր պիտ ծածանենք
Դրօշակն հայկական,
Հապա ինչու չէզոքացար
Ո՞ւր է խոստմունքդ իրական:

Նայիր դէպի Հայաստանը
Սև քօղով է ծածկուած,
Անմեղների դիակներով
Լեռներ, ձորեր կուտակուած:

Ո՛վ դու Եւրոպ մի ուրանար
Արդար արեանց իրաւունք
Իրագործէ այն խոստումդ
Բաւէ թափուին մեր արինք:

ԱՀԱ ԺԱՄԱՆԱԿՆ Է

Ահա հայեր ժամանակն է
Ոխ ու վրէժ լուծելու.
Մեր ժանգոտած թրեր, նոցա
Արիւններով լուալու:

Թողնենք եղբարք քէն ու նախանձ
Տանք ձեռքերնիս մխեանց
Մեր հարազատ սուրբ Հայրենիք
Հերիք լինի խշտիկ շանց:

Աւխթ չտանք որպէս տախծ
Իսկոյն լինենք մարտի դաշտ
Հրոյ ճարակ անենք, ամբողջ
Այն խուժանը գրադաշտ:

Մեր ոսկերիմ չէք թշնամեաց
Մինչ ե՞րբ ծնկի գանք առաջ.
Եւ գլխահակ մոռնալով,
Ամնել պագնել ձեռքերն ալ:

Արդէն նոքա որպէս վիշապ
Հում տալ կուլեն հայերիս,
Եղբարք դարձեալ թմրած մնանք
Զը պաշտպանենք անձերնիս:

Այն վայրենի լպիրշներին
Բաւ չէ՞ ըլլանք ծաղրելիք
Հայի կինն ու աղջիկըն
Ընեն իրանց հերամլիք:

Քանի դարեր մնանք այսպէս
Նորա ձեռին գործիքներ
Եւ հնազանդ հլու ծառայ
Կրել անվերջ հարուածներ:

Օ՜ն ընթանանք սուսերամերկ
Հերիք նոցա տեղիք տանք
Այն տեղն է՝ մեր... կեանքի ազատ-
Սուրբ, փրկութեան յաւերժանք:-

ՈՂԲ ՀԱՅՐԵՆԵԱՑ

Ա՜խ Հայրենիք մինչ երբ այդպէս
Գլխիդ տեսնեմ սև քողը,
Վատ զաղրելի թշնամիքդ,
Լինին վրադ իշխողը:

Երբ որ ծնայ քո սուրբ ծոցում
Նախ ուխտեցի քեզ սիրել.
Այդ դարերի ժանգոտ շղթայդ
Պարանոցէդ փշրել:

ՀՀ Ազգային գրադարան
NL0375297

Որովհետև անտանելի
Նախատանք է ինձ համար.
Որ ես տեսնեմ օտարները
Քեզի խլեան, Հայ աշխարհ:

Մէջդ հանդչող վեհաղների
Դամբարանքն քայքայուած
Ձիգ գարերով ոտքի կոխան,
Բաւ է մեան ծածկուած:

Թէ որ կեանքս ես խնայեմ
Կեանքիդ համար զոհելու
Աչկիս Լոյսէն թող զրկուիմ
Դէմքդ անգամ տեսնելու:

Մնջնջելի պիտի մնայ
Այդ քո սէրդ իմ սրտում
Մինչ աւանդեմ ես իմ հոգիս
Քու անուշիկ սուրբ գրկում:

ՎԵՐՋ

60378